МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«06» հոկտեմբերի 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԷԼՍՈՖԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար 2023 թվականի սեպտեմբերի 15-ին սարքերի, սարքավորումների, գործիքների և նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/26» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի 8-րդ, 67-րդ, 69-րդ և 71-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «ԷԼՍՈՖԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սահմանված ժամկետում (5 աշխատանքային օր) միակողմանի հաստատված պայմանագրի նմուշը չի կցել էլեկտրոնային աճուրդի համակարգ և հրաժարվել է ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումները տուժանքի տեսքով:

Գնահատող հանձնաժողովը, համաձայն Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ կետի՝ «ԷԼՍՈՖԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը զրկել է պայմանագիր ստորագրելու իրավունքից և գնման ընթացակարգի 8-րդ, 67-րդ, 69-րդ և 71-րդ չափաբաժինները հայտարարվել են չկայացած՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ որոշում եմ.

Առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարությանը «ԷԼՍՈՖԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ